ԳԼԵՆԴԵԼԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԿՐԹԱՇՐՋԱՆ
Աշակերտների աջակցության ծառայություններ
223 North Jackson St., Glendale, CA 91206-4380 • Հեռ.՝ 818-241-3111, Ն. 1283 • Ֆաքս՝ 818-547-0213

ԽՆԱՄՈՂԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՑՈՒՅՑՈՒՄՆԵՐ
2026-2027

Նահանգային օրենսդիր մարմինը տալիս է «Չափահաս խնամողի» սահմանումը (ազգական կամ ոչ ազգական), ով իրավասու է իր խնամքի տակ ապրող անչափահասին գրանցել դպրոցում: Հետևյալ պայմանները պետք է բավարարվեն և ձևաթղթերը լրացվեն նախքան ժամադրություն ստանալը.

1. Լրացնել Խնամողի լրացուցիչ տեղեկությունների թերթիկը (Ձև/Form A).
2. Լրացնել Խնամողի իրավասության արտոնագիրը (Ձև/Form B).

   Աշակերտի հետ կապը հաստատող փաստաթղթեր պետք է ներկայացվեն (տես Ձև/Form C): Եթե ժամանակավոր խնամակալություն հայցող ազգականը չկարողանա ապացուցել ազգակցական կապը, ապա նրանից կպահանջվի սույն փաստաթուղթը ստորագրելուց հետո երեք (3) ամսվա ընթացքում տրամադրել խնամատարության արտոնագիր: Խնամատարության արտոնագիր ստանալու համար զանգահարել Երեխաների և ընտանիքի ծառայությունների (Department of Children and Family Services) բաժին՝ 1(888) 811-1121 հեռախոսահամարով, կամ եթե դուք նախընտրում եք ստանալ խնամակալության միջնորդագիր, զանգահարեք Լոս Անջելոսի Փորձաքննիչ դատարան (213) 974-5471 հեռախոսահամարով:
3. Գլենդելի հանրային դպրոցների տարածաշրջանում ապրող աշակերտը և խնամողը պետք է անձամբ ներկա գտնվեն այս փաստաթղթերի ստորագրմանը:
4. Պետք է ներկայացվեն **բնակության վայրի ապացույց** (կենցաղսպասարկման վճարման վերջին երկու անդորրագրի բնօրինակը խնամողի անվամբ) և **լուսանկարով փաստաթուղթ՝** խնամողի ներկայիս հասցեով:
5. Պարտադիր պահանջվում են **գնահատականները կամ առաջադիմության վերջին թերթիկը** վերջին դպրոցից և **պատվաստումների մասին տեղեկանքը:**
6. **Նոտարի կողմից հաստատված նամակ.** Խնամողը պետք է ներկայացնի նոտարի կողմից վավերացված ծնողի նամակը, որը թույլ է տալիս երեխային բնակություն հաստատել մեր կրթաշրջանի տարածաշրջանում խնամողի հետ:
7. Երբ բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը պատրաստ լինեն, ***խնդրում ենք զանգահարել (818) 241-3111, Ն. 1285 հեռախոսահամարով՝ ժամադրություն ստանալու համար, երկուշաբթիից մինչև ուրբաթ օրերին առ. ժամը 8:30-4:00-ը:***

Եթե բոլոր փաստաթղթերը և ներգրավված բոլոր անձինք ներկա են, ապա Խնամողի իրավասության տրամադրումը պետք է տևի 15 րոպեից ոչ ավելի:

Խնդրում ենք նկատի ունենալ.

- Ցանկացած կեղծ փաստաթուղթ ներկայացնելու դեպքում ձեր աշակերտն ***անհապաղ*** կհանվի դպրոցից:
- Եթե ձեր աշակերտի՝ ըստ բնակության հասցեի դպրոցը թափուր տեղեր չունի («Capped»), ձեր աշակերտը կտեղավորվի կրթաշրջանի մեկ այլ դպրոցում, որտեղ ազատ տեղ կա: